ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<26>> դեկտեմբերի 2014թ. N 248

ք. Արմավիր

<<ԽԱՆՋՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երկրորդ մասի <<դ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խանջյան գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի օգոստոսի 22-ի թիվ 02-58 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Խանջյանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2014 թվականի օգոստոսի 22-ի թիվ 126 գրությունները.

որոշում եմ՝

1. <<Խանջյանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը անվանակոչել <<Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել <<Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:
3. << Խանջյանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ նոր կանոնադրությունը սահմանված կարգով ներկայացնել իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*